Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Լեջանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2.«Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են **2022 թ. ապրիլի 7-ից մինչև ապրիլի 27-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Բովաձորի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. մայիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Բովաձոր 3 փողոց, 4 շենք: Տեղեկությունների համար զանգահարել 077-97-61-20 հեռախոսահամարով, էլ. հասցե՝ meline300389@gmail.com: